Հաստատում եմ

Տնօրեն _____ Տ.Մնացականյան

<<Լոռստանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի

2023-2024 ուս. տարվա IX-դասարանի

Դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր

Կրթական դաստիրակչական աշխատանքների հմնական ուղղություններ

1.Ներածություն (դասրանի ընդհանուր բնութագիրը)

2023-2024 ուս տարվա ընթացքում IX դասրանում սովորում են 2 աշակերտ , երկուսն էլ՝ աղջիկ:Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ, աշակերտները իրար նկատմամբ շատ հոգատար են: Աշակերտները կարգապահ են հետևում են դպրոցական կարգ ու կանոնին: Դասարանում չկա գերազանց սովորող աշակերտ:

2. Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

ՈՒսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը :Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար ստացող աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկել այդ թերությունները : Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն

Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա մշակութային կենտրոններ:Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Նշել նաև ,որ ապրիլի 17-ը համարվում է Հուշարձանների և պատմական վայրերի օր:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել , թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:Կազմակերպել այցելություններ թանգարաններ և պատկերասրահներ: Հնարավորության դեպքում կազմակերպել հանդիպումներ արվեստագետների հետ:

3.3 Ռազմա-հայրենասիարական դաստիարակություն

Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ:Կազմակերպել տեսադասեր մեր դրոշի ,զերբի ,զինանշանի վերաբերյալ :Անդրադառնալ մայիսի 8-ին ,որպես երկրապահի օր:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով: Առաջնորդվել ,,Առողջ մարմնում առողջ ոգի,,,սկզբունքով

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը:Աաշակերտների մեջ ձևավորել այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

Նշել նաև ,որ ապրիլի 22 –ը Երկիր մոլորակի պահպանության օրն է:

4. Դպրոց – ընտանիք կապը

Երեխաները և ծնողները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահել դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:Աշակերտը պետք է լավ իմանա իր իրավունքներն ու պարտականությունները:Պետք է լավ կարողանա ներկայացնել իր նախասիրությունները:

ՈՒստարվա ընթացքում ծնողներին ներգրավել կրթադաստիարակչական գործընթացի աշխատանքներին: Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ:

Դասարանի ղեկավարի դաստիարակչական աշխատանքների թեմատիկան

Անցկացման օրը, ամիսը,	Անցկացվող միջոցառման բովանդակությունը	Կատարող

տարեթիվը		
I - 0.6 .09	Ծանոթություն դասարանի հետ, դասարանի ավագի ընտրություն:	**Դասղեկ ,աշակերտ**
II 13.09	Կատարել դասարանի անկյունի ձևավորում՝ .Կարգապահական կանոնները դպրոցում.	
III 20.09	ՀՀ անկախության հռչակման օրվան նվիրված բաց դաս:,,Ներկայի և անցյալի խաչմերուկներում,,,Տեղահանված արցախցիներ.....	
IV 27 .09	,,44 օրյա պատերազմի հետևանքները,, Մոմավառության կազմակերպում գյուղի մատուռում	**Դասղեկ ,աշակերտ**
V 04.10	Կազմակերպել ցերեկույթ նվիրված ուսուցչի և գրադանավարի օրվան	**Աշակերտ ,գրադրանավար**
VI 11.10	Հոկտեմբերի 12-ը որպես ծխախոտի դեմ պայքարի օր	
VII 18.10	Բաց դաս ,,Հին Երևան ,,	
VIII 01.11	Անցկացնել զրույց ,,Իմ նախասիրությունները,, թեմայով	
IX 08.11	Աշնանային կոմպոզիցիա ,,Ոսկե աշուն,,	
X 15.11	Մինչ այժմ ստացած գնահատականների քննարկում, անելիքների պլանավորում	
XI 22.11	Զրույց ,,Բուլինգ,,թեմայով	
XII 29.11	Ռեֆերատ ,,Իմ սիրելի հերոսը,, թեմայով	
XIII 06.12	Երկրաշարժի զոհերի հիշատակի և աղետների դիմակայության օր:(Տեսաֆիլմի դիտում)	
XIV 13.12	Զրույց,,Համացանցի լավ ու վատ կողմերը,,	
XV 20.12	Նախապատրաստվել Ամանորին:Քննարկել I կիսամյակի արդյունքները ,պլանավորել II կիսամյակի անելիքները	
XVI 10.01	Ծանոթացում կրթական կայքերին https://lib.am .edu.a,m , lib.armedu.m	
XVII 17.01	Քննարկել այն խնդիրները ,որոնք կառաջարկեն աշակերտները	
XVIII 24.01	Միջոցառում ,,Ազգ բանակ ,,խորագրով	
XIX 31.01	Քննարկում ,,Ինչու եմ սիրում իմ գյուղը,,	
XX 07.02	Տյառնընդառաջի խորհուրդը	
XXI 14.02	Մեծն լոռեցին և գիրք նվիրելու օրը (19.02)	
XXII 21.02	Սուրբ Գրիգոր Նարեկցու օր(27.02):Մայրենի լզվի օր	
XXIII 28.02	Սումգայիթյան զոհերի հիշատակի օր	
XXIV 6.03	Միջոցառում ,,Կանանց միջազգային օր,,	

XXV 13.03	Թատրոնի միջազգային օր	
XXVI 20.03	Հայ կինոյի օր	
XXVII 03.04	Քննական առարկաների դրվածքի ուսումնասիրում:Առաջարկների քննարկում	
XXVIII 10.04	Հեթանոսական մշակութային արժեքներին նվիրված զրույց	
XXIX 17.04	Միջոցառում ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ	
XXX 01.05	Քննարկել II կիսամյակի նախնական արդյունքները	
XXXI 08.05	Ընտանեկան լուսանկարների ցուցահանդես նվիրված ընտանիքի օրվան (15 .05)	
XXXII 15.05	Ընթացիկ հարցեր	
XXXIII 22.05	II կիսամյակի արդյունքների քննարկում: Քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ	

Ուսուցիչ _____ Մ.Մարգարյան